NMC
National Mortgage Company

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 22-7/1 | Armenia 0010, Yerevan, Hanrapetutyan St., 22-7/1 | +37410 560974 | info@nmc.am | www.nmc.am

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ և ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎՎԿ ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 22-7/1

Հեռ.՝ (+374 10) 56 09 74 , ֆաքս (+374 10) 56 07 41

էլ.փոստ՝ info@nmc.am,

ինտերնետային կայք՝ www.nmc.am

Հաշվետվություն թիվ 04, 05.05.2023

«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի՝ 2023թ. մայիսի 4-ի կայացրած որոշման համաձայն՝ 2023թ. մայիսի 11-ից «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի քսանչորսերորդ թողարկման պարտատոմսերը կցուցակվեն և կթույլատրվեն առևտրի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի հիմնական Abond շուկայում: Պարտատոմսերը բորսայում կշրջանառվեն NMCCBO բորսայական հապավմամբ:

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի քսանչորսերորդ թողարկման (10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս (3 տարի) շրջանառելիության ժամկետով, 12% արժեկտրոնով, 500,000 հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսեր) պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվել էր 2023թ. մարտի 30-ին «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում՝ ստանդարտ, փակ (եվրոպական) աճուրդի անցկացման եղանակով:

NMC
National Mortgage Company
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 22-7/1 | Armenia 0010, Yerevan, Hanrapetutyan St., 22-7/1 | +37410 560974 | info@nmc.am | www.nmc.am

Ընկերության՝ 5,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր ծավալով թողարկված պարտատոմսերի գծով ստացված հասույթը կազմել է 4,985,894,822.67 ՀՀ դրամ:

Տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 12.1078%, իսկ սահմանային (կտրման) եկամտաբերությունը՝ 12.1790%:

Կից՝ ցուցակման վերաբերյալ որոշումը՝ N ՅՊ-014-05/23:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

4 մայիսի 2023 թվականի N ՑՊ-014-05/23

ք. Երևան

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության միջնորդությամբ ներկայացված «Ազգային Հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Թողարկող) 2023 թվականի ապրիլի 05-ի հայտը 5,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 12% արժեկտրոնային տոկոսադրույքով, 500,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2023 թվականի մայիսի 4-ին ներկայացված եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 11-րդ գլխով սահմանված պահանջներին, և ղեկավարվելով Օպերատորի Կանոնների 15-րդ գլխի 70 կետի 1-ին ենթակետով, և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի ե) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Ազգային Հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի 5,000,000,000 ՀՀ դրամ ընդհանուր անվանական ծավալով, 10,000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 12% արժեկտրոնային տոկոսադրույքով, 500,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMNMCCB2OER8 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, շնորհել NMCCBO հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
3. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մայիսի 11-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**